

ԿՈՒԹԵՐԵՇ. «ԻՄՐԱՅԻԼ ՊԵՏՔ Է ՅԱՐԳԻ ԼԻԲԱՆԱՆ»

Ընդամենը շաբաթ մը ետք կ'աւարտի Երկամսեայ պատերազմը դադրեցուցած զինադադարի 60-օրեայ ժամկետը, սակայն տակալին յստակ չէ, թէ իսրայէլեան բռնագրաւող ուժերը պիտի գործադրե՞ն համաձայնութիւնը, թէ՞ ոչ: ԱՄԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնի Կութերեց կարեւորեց լիբանանեան բանակին տեղակայումը Լիբանանի բոլոր շրջաններուն մէջ, միաժամանակ իսրայէլն պահանջելով քաջուիլ գրաւեալ հոդերեն եւ յարգել Լիբանանի գերիշխանութիւնը:

Իսրայէլեան ուժերը երեկ Վերստին թիրախաւորեցին Քֆարշուպայի մերձակայ շրջանները եւ փորձեցին յառաջանայ Յուլայի ուղղութեամբ: Լիբանանեան բանակը յայտարարեց, թէ կը շարունակէ տեղակայումը սահմանային Այն Ըպլ, Տալլ, Ռեյէյ Այնաքա եւ Պընք Ժպէյլ բնակավայրերուն մէջ՝ այդ շրջաններէն իսրայէլեան ուժերու նահանջի լոյսին տակ: Յարաւարեւելեան հասուածին մէջ, զինուորներ երեկ Խիամի ճամբուն Վրայ իսրայէլեան զինուորական ինքնաշարժներուն արգիլեցին հատել լիբանանեան անցարգելը, անոնց ստիպելով Վերադառնալ սահմանային Քֆարքիլա, որ տակաւին կը գտնուի իսրայէլեան տիրապետութեան տակ:

Հարաւի սահմանային գոտիին վրայ շարունակուող աշխատանքներուն ընթացքին լիբանանեան բանակը զիհի մո մա-



մինը յայտնաբերեց Մարուն էլ Ռաս գիւղի մերձակայքն: Լիբանանեան բանակի հրամանատարի պաշտօնակատար զօրավար Յասսան Առուտի Սուրի մերձակայ Պայյատա շրջանին մէջ այցելեց բանակի հետեւակներու 5-րդ զօրախումբին եւ յայտնեց, թէ բանակը Լիբանանի փրկութեան հնարաւորութիւնն է, դրուատելով զինուորներուն զոհողութիւնները եւ նուիրումը Լիբանանին ու լիբանանցիներուն հանդէպ: Իսկ Յօզպալլայի երեսփոխաններէն Ալի Ֆայյատ զգուշացուց, որ եթէ իսրայէլացի զինուորները մնան նոյնիսկ կտոր մը լիբանանեան հողի վրայ, ապա Յօզպալլա պիտի համարէ, որ զինադադարը փլուզուած է:

ԿՐԱԿՈՑՆԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՄԱՆԻՆ ՎՐԱՅ

Իսկ Լիբանան-Սուլրիա սահմանին վրայ, բանակը յայտարարեց, թէ զինուոր նը վիրաւորուած է սուրիական հողերէն արձակուած կրակոցներու պատճառով։ Միջադէպ տեղի ունեցած է Յըրմէլի սահմանային քասր շրջանին մէջ, ուր լիբանանցի զինուորները կրակ բանալով հակադարձած են սուրիացի զինեալներու կրակոցներուն։

ԹՐԱՄՓԻ ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Երկողորդ անգամ ըլլալով, Տննըլտ Թրամփ երեկ մուտք գործեց Սպիտակ տուն, որպէս Միացեալ Նահանգներու նոր նախագահ:



Ամերիկեան նոր վարչակազմի պատասխանատուներէն մէկը յայտնեց, թէ նորընտիր նախագահին առաջին գործերէն մէկը պիտի ըլլայ երկրին մէջ ուժանիւթային արտակարգ դրութեան յայտարարութիւնը, որպէսզի կարելի ըլլայ թափ տալ ամերիկեան ուժանիւթային վստահելի եւ յարնար սակագիներ առաջարկող ոլորտի մը: Նոր վարչակազմը յայտարարեց նաեւ, որ Թրամփ կը մտադրէ չեղարկել սեռերու բազմազանութեան դրութիւնը ու վերստին որոշել, թէ կայ միայն երկու սեռ՝ առական եւ իգական: «Ամերիկացիներուն դրամը պիտի չգործածուի սեռ փոխելու գործողութիւններ կատարելու համար», ըստ վարչակազմի պատասխանատուներէն մէկը: Աս նշեց նաեւ, որ Թրամփ կը մտադրէ չեղարկել նաեւ ամերիկեան հողին վրայ ծնածներուն ամերիկեան քաղաքացիութիւն սիրելու որդեգիր:

Հնորիելու օրենքը:

Լիբանանի Հանրապետութեան նախագահ ժողէֆ Առև շնորհաւորական հեռագիր յիեց Թրամփին՝ մաղթելով յաջող առաջնորդութիւն դէպի յաւելեալ բարգաւաճում եւ զարգացում։ Առև նաեւ կստահութիւն յայտնեց, որ Թրամփի նախագահութեան օրերուն աւելի պիտի խորանան Պէյրութ-Ուաշինգտոն սարաեռութիւններուն:

Թթանգիր նախագահութեան հարցով մտահոգութիւն յայտնեց Ֆրանսայի Վարչապետը: Ան ահազանգեց, որ Եւրոպան լորսական է և անօդական է:

ԱՐԱՋԱՎԳ ՀԱՍԱՑԱՆՑԱՅԻՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԻ ՓՈՐՁԵՐԵՆ

Ընդհանուր անվտանգութեան ծառայութեան ընդհանուր տնօրինութիւնը հաղորդագրութեամբ նը քաղաքացիները զգուշացուց Ֆեյսպութի վրայ գործող «SAWA» խորագրեալ էջին հետ հաղորդակցելու վտանգներէն, նկատի առնելով որ ան հաւանաբար կը պատկանի խսրայէլեան Մոսատին եւ կը գործածուի լիբանանցի քաղաքացիներ որպէս Խսրայէլի գործակալ զինուորագրելու համար:

ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԿԸ ՏԵՍԱԿՑԻ
ՆԱԽԱԳԱՌ
ԱՐՏԵՄԻ ՇԵՏ

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին գլխաւորած միաբան հայրերու պատուիրակութիւն մը երեկ այցելեց Պաապտայի նախագահական պալատ, ուր տեսակցեցաւ հանրապետութեան նախագահ ժողէֆ Առւնի հետ եւ Լիբանանի Հայ առաքելական համայնքին անունով ջերմ շնորհաւորութիւն յայտնեց անոր: Դիտել տալով, որ նախագահին ընտրութեամբ նոր էջ մը կը բացուի Լիբանանի կեանքին մէջ, Վեհափառ Հայրապետը նշեց, որ ընտրութենեն ետք Առւնին արտասանած ուղերձը յստակօրէն կը պարզէ անոր տեսլականը եւ յանձնառութիւնը Լիբանանի նկատմամբ՝ յոյս ներշնչելով ժողովուրդին:



Արամ Ա. կաթողիկոս ըստ, թէ «Լիբանանը դիմագրաւող ներկայ տագնապներուն դիմաց նախագահի գործունեութիւնը հարկ է դառնայ Լիբանանի փրկութեան ուղղուած առաքելութիւն», լիբանանահայութեան պատրաստականութիւնը յայտնելով մասնակից դառնալու այդ ուղղեգիծին: Ան նախագահին ներկայացուց նաեւ Կաթողիկոսութեան ներքին եւ թեմական կառոյցները: Նախագահ Առւն շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին ու լիբանանահայ համայնքին եւ կարեւորեց հայութեան մասնակցութիւնը թէ նոր կառավարութեան, թէ Լիբանանը վերականգնելու աշխատանքներուն, ընդգծելով միասնականութեան հրամայականը՝ որպես լիբանան առաջնորդուի դեպի բարգաւաճում:

Աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս համբավետութեան նախագահին նուիրեց Բարձր Քերպի Աւետարանին կրկնօրինակը:

ՅԻՄՆԱՄԵԱՅ ՎԱՍՏԱԿԻ ՄԸ ՀԱՎԱԿԱՆՈՐԸ՝ ՀԻԼՏԱ ԳԱԼՖԱՅՅԵԱՆ- ՓԱՌՈՍԵԱՆ

ճիշդ 45 տարի առաջ, 1980-ին, Փարիզի մէջ իրերայացորդ կերպով լոյսին կու գային բանաստեղծական երկու սիրուն հատորներ՝ «Կաթիլ մը» եւ «Լեզուեն անդին»։ Յերինակ՝ Յիշտա Գայ ֆայեան։



Գրականագիտ Մինաս Թեօլէօլեան իր «Դար մը գրականութիւն» հատորին մէջ բարձրօրէն պիտի գնահատէր Յիլտային քերթողական արուեստը սա՛ տողերով. «Բաց ճակատ, անկեղծ բխումով մը ընթերցողին փոխանցուելու ընդունակ, ճառագայթող իմացութեան մը եւ նոյնքան բափանցող զգայնութիւններու խորութեամբ յատկանշուող քերթողուիկ՝ որ գիտէ ապրումներն ու մտածումները հաղորդական դարձնել, առանց ապավինելու բերնիքի ընկալեալ միջոցներու, գրեթէ խօսակցական լեզուի, մտերմասաց ջերմականացուութիւններու հերումու մօք»:

(Հարու նաև ութիւնը լու լուծմնեց է՞)



ՀԻՅԱՆԱՆԱՀԱՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿԱՐԱՐՆԵՐԻՆ՝

85-ԱՄԵԱՅ Հ.Մ.Մ.-ԱԿԱՆ ԸՆԿԵՐ ՆԱՀԱՊԵՏ ՂԱՐԻՊԵԱՆԻ ՀԵՏ

Զիմք ճամշցողներէն շատեր պիտի զարմանան: Ս.Դ.Հ.Կ.-ի նախկին Վարչի մարդինի անոնամ ընկեր Նահապետ իրաւարար՝ Քամեստիս համար ալ անակնկալ էր: 2000 թուական ներուն կուսակցական հոգինով կը գործացեցինք, սակայն իրաւարար ըլլալէն տեղեկալ չէի: Այս մասին աւելի ուշ լսեցի: Երբ կը թերատիկ միջազգային իրաւարար Սարգսի Տեմիրծեանի «Յուշերս» գրքոյկը, հոն կարդացի ընկեր Նահապետին մասին, անգամ մըն ալ մտով՝ եւ այժմ ալ բարձրածայն հաստատելով, թէ ինչքա՞ն օգտակար է մարդոց յուշագրութիւնները Սիոնիքան մը արխիմէն կամ գաղութի պատմութեան համար:



Պէտք էր շատապել, ժամանակէ մը ասդին իրապարակէ քաշուած ու առողջական պայմաններով պահանձնացած ընկեր Ղարիպեանին այցելել: Ընկեր Արա Գոճազլամեանը խնդրուած ժամանդութիւնը իրականացաւ անցեալ Շաբաթ օր: Ընկեր Նահապետին հետ մեզի գրուցակից դարձան նաեւ որդին՝ «Արարատ»-ի պաշտօնակիցներէն ընկեր Սահակը, եւ բողը՝ Հ.Մ.Մ.-ի փողերախումբի պատասխանատու՝ ընկեր Նարեկը:

Մինչ ընկեր Սահակի կողմէ կարկանդակով կը հիբասիրութիւնը, լսեցինք, որ երկու օր առաջ՝ 16 Յունուարին ամբողջացած է ընկեր Նահապետի 85 տարիքը: Ծնորհաւորդութիւնը գինը: «1940-ի ծննդն եմ, ժամանակին դաշտի վրայ երկայնքին-և այսքին կը վազգեինք, ըսաւ, իման տան մէջ նոյնիսկ կը փորձենք գգուցօրէն շարժիլ, առաջուան պէս չենար իշեն, քալել»:

«Չա՞ն մը խաղեր «սուլած եմ», - ըսաւ նախկին «հաքամ»ը եւ աւելցուց, - իրաւարար Սարգսի Տեմիրծեանին հետ Ղամակուի եւ Թուրքիոյ մէջ դատաք են միջազգային մրցումներ եւ որպէս եզրային եւ կերպունական իրաւարար»:

Իր ժամանակակից հայ իրաւարարներէն յիշեց նաեւ Հ.Մ.Մ.-ականներ Գրիգոր Լաշինեանի, Երուանդ Պայեանի, Խաչիկ Պոյածնեանի, նաեւ՝ ժողէֆ Նալպանտեանի, Յակոբ Գարակիօնեանի, Վահե Մինասեանի, Աւետիս Թորոսեանի, Սարգս Աւագեանի, իսկ տեղացիներէն Արէք Սրբնէնի եւ Սապահ Ֆալլահի անունները:



Փետրուար 1974: Հ.Մ.Մ. եւ Հ.Մ.Ը.Ը. միացեալ կազմ ընդրմ հայրենի «Արարատ»:

Մրցումն կիսախաղն է. արդիմեր՝ 1-1:

Զախեն աջ՝ թերդապահ Արքահամեան, «Արարատ»ի խմբապետը Զանազանեան, Յովսէվիկ Մունջօնլեան, օրուան երեք հայ իրաւարարներ՝ Յակոբ Գարակիօնեան, Սարգս Տեմիրծեան, Նահապետ Ղարիպեան եւ յառաջապահ Խաչիկ նիկէրիմեան:

Ընկեր Նահապետ պատմեց, որ նախքան մրցումներ ասուելուց, եղած է՝ Հ.Մ.Մ.-Փարամագը Երկողորդական խումբի մէջ լայ ֆուլպարիսա, թիւ 3 մարզաշապիկը կողոյ «հալֆատը», որպէս խաղընկերներ ունենալով «պատիկ» Սարտիկը, Կիւլապին եւ այլք:

Թէ «ինչո՞ւ իրաւարար դարձաւ» հարցումին կարծ պատասխաննեց՝ «կը սիրեմ» ըսելու: Իսկ ամենաշատը ո՞ր դէմքերն են որ մինչեւ այսօր տպաւրաքար է զինք, անբանականութիւնները յիշել դուրարանալով հանդերձ ըսաւ. «Պատասխանատու մրցումի մը ընթացքին «Քուշ»ը (Եղրայինը) վարտաք եմ դաշտին եւ մրցումը շարունակած 2 իրաւարարով, անոր առաջ տարօրինակ որոշումներով մրցունը խանգարելուն համար: Տարի մըն ալ դատաք են Հ.Մ.Մ. ընդուն «Արարատ» բարեկամական մրցումը: Ուրիշ դրուագով մը մրցումի մը ընթացքին կայացուցած որոշումն բարկանալով, հարուածէլու միտունվ վրաս յարձակեցաւ մրցակից խումբերն մէկուն կատողած ֆուլպարիսա: Նախքան հարուած ստանալս ես էի, որ սուլիչովս աղուոր «պօքս» (կառուի) մը

հասցուցի իրեն: Բարեպահտարար այդ օր ոստիկանական ջոկատին պաշտպանութեանը ապահով հասայ:



1967-ին Մարզական աւանին մէջ, Վիճնական «Ծմիտվիրի» համեստ կազմը 3-1 արդիմնորով յաղթեց «Ռասիմկ»ին:

Զախեն աջ՝ հիւր խումբի խմբապետը, իրաւարար Տեմիրծեան, օգնական իրաւարար Նահապետ Ղարիպեան եւ «Ռասիմկ»ի խմբապետը Ռասիմկը միջազգային իրաւարարի կըոժանանար, դէմին եւ կարմիր քարտերը:

Այդ մասունքներով ալ լուսանկարուեանք, պատմութեան մէջ փունջ մը անմոռաց ու անվերադարձ յիշատակներ դրոշմած ըլլալով համար:

Կարձրդ կատար, յարգելի Հ.Մ.Մ.-ական ընկեր Նահապետ:

Ն.6.

Հ.Մ.Մ. եւ Հ.Մ.Ը.Ը. Միաժեւ ԿազՄ ԸՆԴՀՆ ՀԱՅՐԵՆԻ «ԱՐԱՐԱՏ» ԽԱԿԱՏՈՒՄԸ

1973-ին Երեւանի «Արարատ»-ը արձանագրեց շատ մեծ յաղողութիւն: Ան արդարուն կըշունեցաւ Խորհրդային միութեան կրկնակի ախտեան, խելով Երկրին ֆուլպուի առաջնութիւնը եւ բաժանութեանը:

Ամբողջ Յայաստանի եւ արտասահմանի հայութեան ուրախութիւնը եւ հապարտութիւնը չափ չուներ: Վերջապես 1974-ի Ֆետրուարին Հ.Մ.Մ.-ի մասնաւոր հրաւերով «Արարատ» ժամանակ Պեյուուր: Այդ օրը, Յինջազարթի, Վարդանանց տօնն էր: Մարզական աւանը (Շամունի անուան մարզադաշտը) շատ թիւ արդիով ընդունած էր այսքան խուռներամ բազմութիւն մը:

Առաջին հերին «Արարատ» հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Մ. եւ Հ.Մ.Ը.Ը. միացեալ կազմը յառաջապահ՝ Յովսէվիկ ակնարիդ մէջ խելով գնակը ու նշանակեց միացմին դէմ: Միցումին Երեք իրաւարարներն ալ հայեր էին. Սարգս Տեմիրծեան, Յակոբ Գարակիօնեան եւ Նահապետ Ղարիպեան:

Յագիւ սկսաւ մոցում, Հ.Մ.Ը.Ը.-ի փողոքական յառաջապահ՝ Յովսէվիկ ակնարիդ միացմին առաջին նշանակեց միացմին դէմ: Միցումը շարունակուեցաւ պաղ ու անհամ: Առաջին կիսախաղի ասաւանի վերջութեան էր որ Նազար Պետրոսեան անձնական նախաձեռնութեամբ նշանակեց «Արարատ»-ի հայաստանական կոլը:



Հ.Մ.Մ. - Հ.Մ.Ը.Ը. միացեալ կազմնորու և «Արարատ»ի խմբապետները իրաւարարներով միասին: Զախեն աջ՝ Հ.Մ.Մ. - Հ.Մ.Ը.Ը. միացեալ կազմնորու խմբապետ Հ.Մ.Մ.-ի յառաջապահ Ստեփանի Բեկէնեան, Նահապետ Ղարիպեան, Յակոբ Գարակիօնեան եւ «Արարատ»ի խմբապետ Յովսէվիկը միացանեան Զանազանական:

Եթէ այսքան առաջին ելոյթը: Արդարուն խոստովանիմ թէ ոչ ես, ոչ ալ ներկայ հազարաւոր մարզաւերու տպաւրուեանք «Արարատ»-ի այս առաջին ելոյթըն եւ յուսախափ հեռացան մարզադաշտէն:

(Սարգս Տեմիրծեանի յուշերէն)

«SUPER LEAGUE» եւ «GEN ALPHA LEAGUE» ՄՐՑԱՎԱՐՔԵՐՈՒ ՀԱՄԱԿԱԿԱՆ ՊԱՏԱԿԱՆ ՖՈՒԹՈՒՍԻ

Լիբանանի 2008-2009 եւ 2010-ի տարիքային ակադեմիան ներու մրցաշարը թեակոխած է իր ճակատագրական փուլը:

Ըստ Երեւոյիքին, մեր պատամիները բաւական փորձառութիւն համարած են եւ կը ջանան բարձ դիրքեր գուաւել: 2008-2009 տարիքային խումբը ընդգրկուած ըլլալով կը խումբելու խաղացանկին վրայ, յարանակներով աւարտած է առաջին հանգուանը եւ համար է կիսաարտսական:

2010-ի ակադեմիան, «GEN ALPHA LEAGUE»ի ծիրէն ներս, Հ.Մ.Մ անպարտէլի մնալով երի մրցումներու աւարտին գուաւած է երկորդ հորիզոնականը:



Իսկ 2014-2015 ակադեմիայի պատամիները ծարաք առաւսու բարեկամական հանդիմունով 8-3 արդիմնորով յաղթեցին BFA ակումբի տարեկաներուն:

Ստորեւ 2 լիկերուն մը Հ.Մ.Մ.-ի պատամիներուն ներկայացուցած ֆուլքուրային մրցումներուն արդիմները:

«SUPER LEAGUE». 2008-2009 ակադեմիա



Հ.Մ.Մ. x ANCOR 4 – 0

Հ.Մ.Մ. x PSG 1 – 0

Հ.Մ.Մ. x EFB 2 – 0

Հ.Մ.Մ. x WOLVES 3 – 0

Մրցումները տեղի ունեցան EFB-ի մարզադաշտին վրայ:

«GEN ALPHA LEAGUE». 2010-2012 ակադեմիա



Clatch x Հ.Մ.Մ. 0 – 3 («Ֆերմերու» մարզադաշտ)

Հ.Մ.Մ. x CFC 2 – 0 («Ֆերմերու» մարզադաշտ)

Հ.Մ.Մ. x Քաֆարշինա 2 – 1 («Ֆերմերու» մարզադաշտ)

